ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ԴԻՎԱՆԱՊԵՏ ԳԵՐՇ. Տ. ԱՐՇԱԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ԶԵԿՈՒՅՑԸ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ 2020 Թ. ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ՝ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՒՈՐ ԽՈՐՀՐԴԻ ԺՈՂՈՎՈՒՄ

(23–27 փետրվարի 2021 թ.)

Սույնով ներկայացվում է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի 2020 թ. գործունեության ամփոփ տեղեկագիրը։ Տեղեկագիրն ընդգրկում է Ամենայն Հայոց Կաթողիկոսի, թեմերի, եկեղեցական այլ կառույցների եւ եկեղեցական հաստատությունների գործունեությունը։

Նախորդ տարում Մայր Աթոռի գործունեությունը մեծապես պայմանավորված է եղել Հայաստանում տեղ գտած արտակարգ իրավիճակներով՝ կապված կորոնավիրուսի թագախտի համավարակի, արցախյան պատերազմի եւ դրանց հետեւանքով ստեղծված ծանր իրադրության հետ։

Ա. ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՒ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հաշվետու տարում Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսը պաշտոնական այցելությունների եւ ընդունելությունների շրջանակներում ունեցել է 50-ից ավելի հանդիպումներ եկեղեցական ու պետական բարձրաստիճան պատվիրակությունների, ազգային, հասարակական եւ մշակութային շրջանակների ներկայացուցիչների հետ։ Առանձնացնենք այցելություններից եւ ընդունելություններից առավել հատկանշականները

Ամենայն Հայոց Կաթողիկոսը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում ընդունել է՝

— հունվարի 26-ին՝ Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարին եւ ՀՀ եւ ԱՀ ԶՈՒ բարձրագույն սպայական կազմի ներկայացուցիչներին, ՀՀ ԶՈՒ հոգեւոր առաջնորդության գնդերեցներին,

— փետրվարի 11-ին՝ Հորդանանի Հաշիմյան Թագավորության արքայազն Նորին Մեծություն Աբդալլահ Երկրորդ Իբն Ալ—Հուսեյն Ալ—Հաշիմիին,

— փետրվարի 28-ին՝ Վրաստանի պաշտպանության նախարար Իրակլի Ղարիբաշվիլիին,

— մարտի 21-ին՝ Դաունի համախտանիշի համաշխարհային օրվա առիթով, «Արեւ-երեխաներ» խմբին,

— հոկտեմբերի 21-ին՝ արցախյան պատերազմի օրերին, Արցախի Հանրապետության վաստակյալ նախագահներ Արկադի Ղուկասյանին եւ Բակո Սահակյանին,

— հոկտեմբերի 27-ին՝ Ֆրանսիայի Հանրապետության Խորհրդարանի պատգամավորական խմբին։

Ամենայն Հայոց Կաթողիկոսն այցելություն է կատարել՝

— հուլիսի 21-ին՝ ՀՀ պաշտպանության նախարարության կենտրոնական զինվորական հիվանդանոց՝ տեսակցելու Տավուշում՝ հայ-ադրբեջանական սահմանին, ռազմական գործողությունների ընթացքում վիրավորում ստացած զինծառայողներին,

— սեպտեմբերի 8-ին՝ ՀՀ Ազգային ժողով, ուր հանդիպում է ունեցել ՀՀ Ազգային ժողովի նախագահ Արարատ Միրզոյանի հետ,

— սեպտեմբերի 27-ին՝ պատերազմի առաջին իսկ օրը, Նորին Սրբությունը, լինելով Վատիկանում, հանդիպել է Հռոմի Սրբազան Քահանայապետ Ֆրանցիսկոս Պապի հետ եւ ներկայացրել Արցախում տիրող իրավիճակը,

— հոկտեմբերի 1-ին՝ «Իզմիրլյան» բժշկական կենտրոնում եւ հոկտեմբերի 6-ի երեկոյան՝ «Էրեբունի» բժշկական կենտրոնում բուժվող վիրավոր զինծառայողներին,

— հոկտեմբերի 27-ին՝ ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանին՝ պատերազմական իրավիճակում Հայ Եկեղեցու ամբողջական զորակցությունը հայտնելով հայրենի պետությանը։

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԿՈՆԴԱԿՆԵՐ, ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԳՐԵՐ ԵՒ ՈՒՂԵՐՁՆԵՐ

2020 թ. հրապարակվել է հայրապետական 18 կոնդակ։ Արքության պատիվ է շնորհվել Գերշ. Տ. Սահակ արք. Մաշալյանին, հաստատվել է

Բալթյան երկրների հայոց թեմը, «Ս. Գրիգոր Լուսավորիչ» շքանշանով պարգեւատրվել է 1, «Ս. Սահակ — Ս. Մեսրոպ» շքանշանով՝ 2, «Ս. Ներսես Շնորհալի» շքանշանով՝ 13 անձ։

Շնորհվել է հայրապետական 37 օրհնության գիր։ Խոսքեր եւ ուղերձներ են հղվել ազգային եւ պետական տոների, համավարակի եւ պատերազմական իրավիճակների, միջեկեղեցական հանդիպումների եւ մի շարք այլ տոների ու միջոցառումների առիթներով։

Մասնավորապես՝

Մարտի 13-ին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսը հանդես է եկել հայտարարությամբ՝ հորդորելով ամենայն զգոնությամբ եւ զգուշավորությամբ վերաբերվել տարածվող համավարակին։

Մարտի 18-ին կատարվել է համազգային աղոթք՝ ի բժշկություն բոլոր հիվանդների, որի ընթացքում Նորին Սրբությունն ուղերձով դիմել է ժողովրդին՝ հորդորելով միմյանց հանդեպ ցուցաբերել առավելագույն ուշադրություն եւ հոգածություն։

Հունիսի 3-ին Ս. Գայանե վանքում, հանդիսապետությամբ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի, կատարվել է բժիշկների եւ բուժաշխատողների օրհնության արարողություն։ Վեհափառ Հայրապետն իր ուղերձում գնահատանք է հայտնել առողջապահության ոլորտի նվիրյալ մշակներին։

44-օրյա պատերազմի ընթացքում Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսը բազմիցս հանդես է եկել կոչերով ու հորդորներով՝ ուղղված քաղաքական, հանրային, հասարակական գործիչներին, թեմական առաջնորդներին, հոգեւորականաց դասին։ Իր ուղերձներում Նորին Սրբությունը հորդորել է բարձր պահել հայրենասիրության ոգին, համախմբվել եւ դիմակայել փորձություններին՝ արժեւորելով մեր հայրենիքը եւ նրա բացառիկությունը։ Վեհափառ Հայրապետը մշտամնա աղոթքի է հրավիրել մեր ժողովրդի զավակներին՝ հայցելու Բարձրյալի պահպանությունը եւ պաշտպանությունը մարտնչող զինվորներին, համբերություն եւ մխիթարություն՝ հայ ազգին։ Կարեւորելով աջակցությունը հայոց բանակին, Ամենայն Հայոց Կաթողիկոսը հորդորել է կազմակերպել հանգանակություններ, միասնաբար կամավորագրվել հայոց բանակին եւ հնարավոր օժանդակություն ցուցաբերել Արցախի ժողովրդին։ Դիմել է երկրների ղեկավարներին, միջեկեղեցական ու միջկրոնական կառույցներին՝ վճռական ձայն բարձրացնելու հանուն արյունահեղության

կասեցման, մարդկային կյանքերի փրկության, Արցախի հոգեւոր, պատմամշակութային ժառանգության պահպանման։

ՆՎԻՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՌՆԵՐ

2020 թ. ընկալյալ կարգով շարունակվել է հաղորդակցությունը Նվիրապետական Աթոռների հետ։ Համավարակի եւ պատերազմի ընթացքում Ամենայն Հայոց Կաթողիկոսը Նվիրապետական Աթոռների գահակալների հետ քննարկել է համավարակի պայմաններում եւ պատերազմական շրջանում Եկեղեցու ծիսական եւ հովվական գործունեության կազմակերպումը։

Փետրվարի 28-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին է ժամանել Կ. Պոլսի հայոց նորընտիր Պատրիարք Ամենապատիվ Տ. Սահակ արք. Մաշալյանը՝ մասնակցելու Գերագույն հոգեւոր խորհրդի ժողովին։ Այդ օրերին Պատրիարքը տարբեր հանդիպումներ է ունեցել Ամենայն Հայոց Կաթողիկոսի հետ, որոնց ընթացքում ներկայացրել է իրավիճակը Կ. Պոլսի Հայոց Պատրիարքությունում։ Սահակ արք. Մաշալյանը Մայր Աթոռում մասնակցել է նաեւ Սբ. Գրիգոր Նարեկացու «Մատյան Ողբերգության» աշխարհաբար արեւմտահայերեն ամբողջական թարգմանության շնորհանդեսին։

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսը հեռախոսազրույցներ է ունեցել Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոս Ն. Ս. Օ. Տ. Տ. Արամ Ա.-ի հետ, մասնավորապես քննարկվել են համավարակով պայմանավորված ծիսական արարողություններին հավատացյալների մասնակցության, Ս. Հաղորդության բաշխման ձեւի փոփոխության եւ այլ հարցեր։

Նվիրապետական Աթոռների հետ քննարկումներ են եղել նաեւ արցախյան պատերազմի ընթացքում Եկեղեցու կողմից ձեռնարկվող քայլերի շուրջ։

ԵԿԵՂԵՑԱԿԱՆՆԵՐ ԵՒ ՊԱՇՏՈՆԵՈՒԹՅՈՒՆ

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի եկեղեցականության ընդհանուր թիվը 770 է.

- *51 արքեպիսկոպոս եւ եպիսկոպոս,*
- *53 ծայրագույն վարդապետ եւ վարդապետ,*
- *23 աբեղա,*
- *482 քահանա,*

• 161 սարկավագ (136 միաբան, 25 ճեմարանում ուսանող)։

2020 թ. կատարվել է 6 ամուսնացյալ քահանայի ձեռնադրություն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում եւ 6 սարկավագի՝ Ավստրալիայի եւ Նոր Զելանդիայի հայոց թեմում։

Հաշվետու տարում Վեհափառ Հայրապետի կողմից 19 քահանա արժանացել է լանջախաչ, իսկ 14-ը՝ ծաղկյա փիլոն կրելու իրավունքի։

Ցավոք, տարին զերծ չի եղել նաեւ եկեղեցականների անժամանակ կորուստներից։ Թե՛ համավարակի, թե՛ արցախյան պատերազմի եւ թե՛ այլ պատճառներով ի Տեր են ննջել Գուգարաց թեմի առաջնորդ Գերշ. Տ. Սեպուհ արք. Զուլչյանը, Տ. Եղիշե ավ. քհն. Սարգսյանը, Տ. Եղիշե ավ. քհն. Բաղրամյանը եւ Տ. Վահան քհն Հեբոյանը։

Զոհվել է առաջնագծում սպասավորող Բրշ. Նարեկ սրկ. Պետրոսյանը, իսկ Հոգշ. Տ. Մկրտիչ աբդ. Կարապետյանն առ այսօր համարվում է անհայտ կորած։

Հաշվետու տարում Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի բաժիններում եւ ենթաբաժիններում աշխատել է 1037 անձ։

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐ

Անցյալ տարում Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում կանոնավորապես գումարվել են Գերագույն հոգեւոր խորհրդի եւ հայաստանյան եպիսկոպոսների ժողովներ։

Ժողովների ընթացքում հիմնականում քննարկվել եւ համապատասխան որոշումներ են կայացվել համավարակի եւ արցախյան պատերազմի ընթացքում Եկեղեցու գործունեության վերաբերյալ, եւ համապատասխան հանձնարարականներ են տրվել թեմերում հոգեւոր խնամքի, սոցիալական աջակցության տրամադրման եւ ծիսական կյանքի կազմակերպման ուղղությամբ։ Կայացված որոշումների համաձայն՝ համավարակի բուռն տարածման շրջանին պարբերաբար դուրս են բերվել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում պահվող մեծագույն սրբություններ՝ Ս. Գրիգոր Լուսավորչի Աջը, Ս. Գրիգոր Նարեկացու մասունքը, Կենաց Խաչափայտի մասունքը, Ս. Գեղարդը եւ այլն։

Փետրվարի 18-ին՝ Սրբոց Ղեւոնդյանց տոնին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, նախագահությամբ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, տեղի է ունեցել քահանայից ավանդական ամենամյա հավաքը, որին մասնակցել

են 230 եկեղեցական՝ 190 քահանա հայաստանյան թեմերից, թեմական առաջնորդները եւ Մայր Աթոռի միաբանությունը։

Բացի հիշյալ ժողովներից՝ գումարվել են նաեւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի կողմից ստեղծված հանձնախմբերի եւ խորհուրդների ժողովներ։

Կանոնավոր գումարվել են Վանական խորհրդի, Իրավախորհրդատվական հանձնախմբի, Կարգապահական հանձնախմբի, Վարդապետական եւ Ծայրագույն վարդապետական թեզերի պաշտպանության հանձնախմբի եւ Ճարտարապետաշինարարական խորհրդի հանդիպումները։

ԵԿԵՂԵՑԻ–ՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հաշվետու տարում պետական իշխանությունների հետ հարաբերություններն իրականացվել են մասնավոր հանդիպումների, հանրային միջոցառումներին համատեղ մասնակցության եւ փոխադարձ հետաքրքրություններ ներկայացնող թեմաների քննարկումների շրջանակներում։

Դեռեւս 2019 թ. հունվար 29-ին ձեւավորված Եկեղեցու եւ պետության ներկայացուցիչների աշխատանքային խումբը տակավին չի գրանցել արդյունքներ։ Շարունակվում են չլուծված մնալ կրթական բարեփոխումների եւ այդ շրջանակում մասնավորապես «Հայ Եկեղեցու պատմություն» առարկային, ինչպես նաեւ պատմական հուշարձանի կարգավիճակ ունեցող սրբավայրերի պահպանությանը, եկեղեցականների զինապարտության առնչված, այլեւ մի շարք այլ հարցեր։

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը մեծապես ներգրավված է եղել համավարակի դժվարություններին եւ պատերազմի արհավիրքներին դիմակայելու գործընթացներին եւ կարելիի սահմաններում աջակցել պետությանը։

Համավարակի բուռն շրջանում Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը պետական պատկան կառույցների հետ համագործակցությամբ շարունակել է կարիքավոր հայորդիներին տրամադրվող օժանդակությունը՝ պարենային փաթեթներ տրամադրելով սոցիալապես անապահով ընտանիքներին։

Ինչպես հայ ժողովրդի պատմության ընթացքում, արցախյան պատերազմի օրերին նույնպես Հայ Եկեղեցին իր առաքելության մեջ մշտապես զորակցություն է բերել պետությանը։ Դիվանագիտական, միջեկեղեցական ճանապարհներով ջանք է ներդրվել հանուն Արցախի Հանրապետության ճանաչման եւ արյունահեղության դադարեցման։ Պատերազմական

օրերին՝ հոկտեմբերի 19-ին, Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսը մասնակցել է Անվտանգության խորհրդի արտահերթ նիստին։

44-օրյա պատերազմի ողբերգական հետեւանքի համատեքստում կտրական փոփոխություն է տեղի ունեցել ՀՀ իշխանության նկատմամբ Եկեղեցու դիրքորոշումներում՝ պայմանավորված պատերազմական իրավիճակում վերջինիս անհամարժեք ու անարդյունավետ գործողություններով, որոնք հանգեցրին Արցախի Հանրապետության տարածքների կորստյան, պատճառ դարձան հազարավոր զոհերի, վիրավորների եւ տակավին գերության մեջ մնացող տասնյակ հայորդիների։

Սույն կացության առջեւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, Գերագույն հոգեւոր խորհրդի եւ բարձրաստիճան մի շարք եկեղեցականների կողմից ՀՀ վարչապետին ներկայացվել է հրաժարականի պահանջ՝ առաջնորդվելով բացառապես ազգային համերաշխության եւ պետության անվտանգության անհրաժեշտությամբ։

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ–ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿՅԱՆՔ

Կորոնավիրուսի համավարակով պայմանավորված սահմափակումների հետեւանքով մշակութային-հանրային միջոցառումները հաշվետու տարում էապես նվազել են թե՛ քանակական, թե՛ ծավալային առումով։ Այսուհանդերձ՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում կազմակերպվել են մարդկանց սահմանափակ թվով հանդիպում-միջոցառումներ։

Նշենք դրանցից մի քանիսը.

• Փետրվարի 28-ին Գեւորգյան հոգեւոր ճեմարանի հանդիսությունների սրահում, նախագահությամբ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, տեղի ունեցավ Ս. Վարդանանց զորավարների տոնին նվիրված հանդիսություն։ Միջոցառմանը ներկա էին Մայր Աթոռի միաբաններ, Գեւորգյան հոգեւոր ճեմարանի, հայաստանյան տարբեր կրթական հաստատությունների սաներ, Վազգեն Սարգսյանի անվան ռազմական համալսարանի սաներ եւ այլ հրավիրյալներ։

• Մարտի 2-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի «Վաչե եւ Թամար Մանուկյան» մատենադարանում, Ամենայն Հայոց Կաթողիկոսի բարձր նախագահությամբ եւ Կ. Պոլսի Հայոց Պատրիարք Ամենապատիվ Տ. Սահակ արքեպիսկոպոս Մաշալյանի մասնակցությամբ, տեղի

ունեցավ «Առաջնեկը՝ նորովի» շնորհանդեսը՝ նվիրված Սուրբ Գրիգոր Նարեկացու «Մատյան ողբերգության» աղոթամատյանի (արեւմտահայերեն թարգմանությունը՝ Մ. Գոչունյանի (Քասիմ)) առաջին ամբողջական թարգմանության վերահրատարակությանը։

ՄԻՋԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Անցյալ տարում շարունակվել են Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի եւ քույր Եկեղեցիների, միջկրոնական տարբեր կազմակերպությունների միջեւ բնականոն հարաբերությունները։ Համավարակի պատճառով փոխայցելությունները եղել են խիստ սահմանափակ։

Ինչպես նշել էինք, 44-օրյա պատերազմի ընթացքում Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսը դիմել է երկրների ղեկավարներին, միջեկեղեցական ու միջկրոնական կառույցներին՝ վճռական ձայն բարձրացնելու հանուն արյունահեղության դադարեցման, Արցախի հոգեւոր, պատմամշակութային ժառանգության պահպանման։ Աշխարհի քրիստոնեական Եկեղեցիների պետերի ուշադրությունը հրավիրվել է Արցախում պատերազմի հետեւանքով վտանգված քրիստոնեական պատմամշակութային կոթողների պահպանման անհրաժեշտությունը։

Կարեւոր է արձանագրել Համայն Ռուսիո Պատրիարք Կիրիլ Ա.-ի դերակատարությունը խաղաղության վերահաստատման եւ պատերազմի ավարտի հարցում, նաեւ հետպատերազմական շրջանում Արցախի մշակութային- պաշտամունքային հուշարձանների պահպանության գործում մեծ ներդրումը։ Ամենայն Հայոց Կաթողիկոսը դիմում է ներկայացրել Համայն Ռուսիո Պատրիարք Կիրիլ Ա.-ին եւ նրա միջոցով նաեւ ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինին՝ Դադիվանքի պահպանության համար։ ՌԴ իշխանությունները դիտակետ են տեղակայել Դադիվանքի հարեւանությամբ՝ հնարավորություն ընձեռելով մեր հոգեւորականներին շարունակելու իրենց ծառայությունը եւ սպասավորությունը, իսկ հավատացյալներին՝ ամեն կիրակի մասնակցելու պատարագներին։

Ի պատասխան Ամենայն Հայոց Կաթողիկոսի կողմից Եկեղեցիների պետերին ուղղված ուղերձների՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում ստացվել են զորակցության նամակներ. Եկեղեցիների համաշխարհային խորհրդի, Հույն Ուղղափառ Եկեղեցու Սուրբ Սինոդի, Անգլիկան Եկեղեցու

առաջնորդ Քենթբերիի արքեպիսկոպոս Նորին Սրբազնություն Ջասթին Ուելբիրի, Կիպրոսի Արքեպիսկոպոս Խրիզոստոմոս Երկրորդի, Եւրոպական Եկեղեցիների Համագումարի գլխավոր քարտուղարի, Գերմանիայի Ավետարանական Եկեղեցու Խորհրդի նախագահ եպիսկոպոս դոկտ. Հայնրիխ Բեդֆորդ-Շթրոհմի, Երուսաղեմի Հունաց Պատրիարք Նորին Ամենապատվություն Թեոփիլոս Գ. Պատրիարքի կողմից։

Միջեկեղեցական եւ միջկրոնական հարաբերությունների ոլորտում իրականացված գործունեության շրջանակներում ուշագրավ են նաեւ հետեւյալ իրադարձությունները.

• Վեհափառ Հայրապետի օրհնությամբ Հոգշ. Տ. Մեսրոպ վրդ. Պարսամյանը, Արժ. Տ. Վահրամ քհն. Մելիքյանը եւ Արժ. Տ. Ադամ քհն. Մակարյանը Կարդինալ Կուրթ Կոխի հրավերով մասնակցել են փետրվարի 15—22-ն իրականացվող 8-օրյա դասընթացներին, որի նպատակն էր խորացնել մեր Եկեղեցիների փոխճանաչողությունը եւ փոխըմբռնումը։

• Կատարվել են նախապատրաստական եւ կազմակերպչական աշխատանքներ 2021 թ. Գերմանիայի Կառլսռուե քաղաքում կայանալիք Եկեղեցիների Համաշխարհային խորհրդի հերթական՝ 11-րդ գագաթնաժողովին ընդառաջ Մայր Աթոռի պատվիրակության պատշաճ ներկայությունն ապահովելու համար։ Նորին Սրբության տնօրինությամբ պատվիրակության մեջ ներառվել են Գերշ. Տ. Վիգեն արք. Այքազյանը, Գերշ. Տ. Արմաշ եպս. Նալբանդյանը, Գերշ. Տ. Հովակիմ եպս. Մանուկյանը, Գերշ. Տ. Գեւորգ եպս. Սարոյանը եւ Գերշ. Տ. Սերովբե եպս. Իսախանյանը։

ՀՈԳԵՒՈՐ-ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մայր Աթոռի բարձրագույն հոգեւոր-կրթական հաստատություններում ուսանում է 119 սան, որոնցից 89-ը՝ Գեւորգյան հոգեւոր ճեմարանում, 21-ը՝ Սեւանի Վազգենյան հոգեւոր դպրանոցում, եւ 11-ը՝ Քահանայից պատրաստման եռամյա լսարանում։

2019—2020 ուսումնական տարվա Բ. կիսամյակը մեկնարկել է 2020 թ. փետրվարի 1-ին, սակայն մարտի 15-ից ՀՀ-ում հաստատված արտակարգ դրության պատճառով առկա դասընթացները դադարեցվել են, եւ մարտի 24-ից մինչեւ մայիսի 31-ը ԳՀՃ ուսումնական գործընթացը կազմակերպվել է հեռավար եղանակով։

Հունիսից ի վեր հոգեւոր բարձրագույն հաստատություններում դասընթացները կորոնավիրուսի համավարակի պատճառով դադարեցվել են մինչեւ 2021 թ. հունվարի 8-ը։

Կալկաթայի հայոց մարդասիրական ճեմարանի եւ Դավթյան օրիորդաց վարժարանում ուսանում է 66 աշակերտ։ Համավարակի պատճառով աշակերտական ամբողջ կազմը 2020 թ. մարտ ամսին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի օգնությամբ տեղափոխվել է իրենց բնակության վայրերը՝ անցնելով հեռավար ուսուցման։

ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

2020 թ. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կրթական գործունեությունը շարունակվել է իրականացվել հետեւյալ ուղղություններով՝

Հայորդյաց տներ

Մայր Աթոռի հայորդյաց 7 տները (Էջմիածին, Աշտարակ, Գյումրի, Վանաձոր, Երեւանում՝ Նորք, Մալաթիա եւ Արաբկիր) եւ Մանրանկարչության արվեստի կենտրոնը նույնպես շարունակել են իրենց գործունեությունը հաշվետու տարում, որտեղ հաճախող ավելի քան 3000 երեխա ու պատանի մասնակցել են բազմաբնույթ մեծ եւ փոքր միջոցառումների, ցուցահանդեսների, մենահամերգների, հանդիսությունների, մրցույթների եւ այլ ծրագրերի։ Կորոնավիրուսով պայմանավորված՝ հայորդյաց տները եւս անցել են հեռավար ուսուցման եղանակին։ Արցախյան պատերազմին հայորդյաց տների սաները հավաքագրել եւ առաջնագիծ են ուղարկել առաջին օգնության պարագաներ, սնունդ, դեղորայք, հագուստ։ Արաբկիրի հայորդյաց տանը մինչեւ տարեվերջ գործել է Արցախից տեղահանվածների կայանման եւ բաշխման կետ, անհրաժեշտության դեպքում՝ գիշերակացով։

Հանրակրթական դպրոցներ

Իրականացվել են «ՀԵՊ» առարկայի մարզային եւ հանրապետական օլիմպիադայի փուլերը, կազմակերպվել են սեմինար-դասախոսություններ՝ Երեւանի դպրոցներում շուրջ 200 «ՀԵՊ» առարկայի ուսուցիչների, Հրազդանի տարածաշրջանի նախադպրոցական ուսումնական

հաստատությունների շուրջ 130 տնօրենների եւ դաստիարակների հետ։ Համավարակի պատճառով «Հայ Եկեղեցու պատմություն» առարկայի ուսուցիչները նույնպես անցել են հեռավար ուսուցման։

«Էօրնեկեան» դպրոց եւ մանկապարտեզ

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին պատկանող նախադպրոցական եւ միջնակարգ դպրոցների գործունեությունը կազմակերպվել է պետական պատկան մարմինների հետ համագործակցությամբ։ Հաշվետու տարում «Էօրնեկեան հանրակրթական դպրոցի» 34 դասարաններում ուսանել է մոտ 500 աշակերտ։ Համավարակով պայմանավորված՝ դպրոցում դասերն ընթացել են հեռավար։ Երեխաներն ու ուսուցիչներն ապահովվել են տեխնիկական համապատասխան միջոցներով։

«Էօրնեկեան մանկապարտէզ» է հաճախել 40 երեխա։ Բնականոն առօրյայից զատ՝ երեխաների հետ կազմակերպվել են մի շարք միջոցառումներ։

ՔԱՐՈԶՉԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Անցյալ տարում Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի քարոզչական գործունեությունը ծավալվել է հետեւյալ ուղղություններով

ՀՀ Զինված ուժեր

Հաշվետու տարում բանակի հոգեւոր սպասավորները Հայաստանի եւ Արցախի տարբեր զորամասերում կազմակերպել են միջոցառումներ, Սուրբ Գրքի սերտողություններ, ինչպես նաեւ անհատական զրույցներ, հանդիպում-քննարկումներ են տեղի ունեցել սպայական եւ շարային անձնակազմի հետ։ Հատուկ հոգեւոր խնամք է տարվել կորոնավիրուսի համավարակի պատճառով հարազատներ կորցրած զինծառայողների հետ։ Արցախյան պատերազմի ընթացքում շարունակել են իրենց ծառայությունը Զինված ուժերում սպասավորող գնդերեցները, եւ նրանցից զատ՝ կամավորաբար առաջնագիծ է մեկնել Հայաստանի եւ Սփյուռքի թեմերում ծառայող 100-ից ավել հոգեւորական։

Բանակում ծառայել են է 58 հոգեւոր սպասավոր (1 եպիսկոպոս, 13 քահանա եւ 44 սարկավագ)։

Հայ եկեղեցու համաշխարհային երիտասարդաց միավորում (ՀԵՀԵՄ)

ՀԵՀԵՄ-ն անցյալ տարի եւս շարունակել է իր առաքելությունը՝ կազմակերպելով տարբեր գիտաժողովներ եւ միջոցառումներ, «Շողակաթ» հեռուստաընկերության հետ համատեղ պատրաստել Մեծ պահքի կիրակիների խորհուրդներին նվիրված հաղորդաշար՝ երիտասարդների մասնակցությամբ։ Օգոստոսի 22-ից սեպտեմբերի 1-ը ՀԵՀԵՄ կենտրոնական գրասենյակում անցկացվել է Ֆրեսկո արդի արվեստի եւ հոգեւոր ֆիլմերի 7-րդ միջազգային փառատոնը։

Քրեակատարողական հիմնարկներ (ՔԿՀ)

2020 թ. 12 ՔԿՀ-ներում սպասավորող 10 հոգեւորականի (1 վարդապետ եւ 9 քահանա) կողմից շարունակվել են հոգեւոր խնամքը եւ տարատեսակ օժանդակությունները ազատազրկվածներին, նրանց ընտանիքներին եւ նախկին դատապարտյալներին։ Հիմնարկներում անցկացվել են հանդիպումներ, Աստվածաշնչի սերտողություններ, առանձնազրույցներ։ Մայր Աթոռի կողմից ազատազրկվածներին տրամադրվել են աղոթագրքեր եւ հոգեւոր գրականություն։ Աշխատանքներ են տարվել նաեւ ՔԿ վարչության հիմնարկների աշխատակիցների հետ։

2020 թ. օծվել է «Արմավիր» ՔԿ հիմնարկի 3-րդ մասնաշենքի «Սուրբ Նշան» մատուռը՝ ձեռամբ Գերշ. Տ. Մուշեղ եպս. Բաբայանի։

Հանրային քարոզչություն

Հանրային քարոզչությունն իրականացվել է հեռուստահաղորդումների, համացանցային հրապարակումների, տպագրվող ամսագրերի, թերթերի եւ գրքերի, Մայր Աթոռի թանգարանների ու գրադարանների միջոցով։

Հաշվետու տարում կանոնավոր կերպով շարունակել է իր աշխատանքները «Շողակաթ» հեռուստաընկերությունը, ինչպես նաեւ տպագրվել են «Էջմիածին» ամսագիրը, «Քրիստոնյա Հայաստան» թերթը։

Հրատարակչական բաժնի կողմից տպագրության է հանձնվել 19 անուն գիրք։ Նվիրատվությունների եւ գնումների շնորհիվ «Վաչե եւ Թամար Մանուկյան» մատենադարանը ձեռք է բերել 8397 միավոր նոր

գրականություն։ Շարունակվել են գրքերի քարտային եւ էլեկտրոնային մատենագիտական նկարագրությունների մշակման, ընթերցողների սպասարկման եւ գրքերի թվայնացման ամենօրյա աշխատանքները։

Անցյալ տարի թանգարաններ է այցելել 4823 անձ։

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հաշվետու տարում Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու կողմից իրականացվել են ավելի քան 2 մլրդ. 118 մլն. ՀՀ դրամի բարեգործական ծրագրեր։ Սոցիալական ծրագրերը հիմնականում ուղղված են եղել Արցախյան պատերազմի հետեւանքով ստեղծված աղետալի իրավիճակի եւ կորոնավիրուսի տարածման հետ կապված դժվարությունների մեղմմանը։

Արցախյան պատերազմի օրերին «Արցախի օգնության ծրագրի» շրջանակներում կազմակերպվել է Արցախից տեղահանված անձանց Ծաղկաձորում, Եղեգնաձորում, Սաղմոսավանում եւ էջմիածնում կացարաններով ապահովելու ծրագիր։

Հետպատերազմյան շրջանում հաստատվել է «Արցախի աջակցության հանձնախումբը», որի կողմից իրականացված ծրագրերի շրջանակներում պարենային եւ առաջին անհրաժեշտության պարագաների փաթեթներ են բաշխվել Արցախում իրենց բնակատեղին կորցրած ընտանիքներին, ամանորյա նվերներ են տրվել արցախյան պատերազմի հետեւանքով զոհված, գերեվարված, վիրավորում ստացած եւ Արցախից տեղահանված երեխաների, դրամական աջակցություն է տրամադրվել Ադրբեջանի վերահսկողության տակ անցած բնակավայրերից գաղթած 4 եւ ավելի անչափահաս երեխա ունեցող ընտանիքների։

Կորոնավիրուսի համավարակով պայմանավորված՝ Մայր Աթոռի եւ թեմերի միջոցով կազմակերպվել են մարդասիրական ծրագրեր, որոնց շրջանակներում պարենային եւ առաջին անհրաժեշտության պարագաների օգնություն է տրամադրվել անապահով ընտանիքների, առողջապահական ծրագրերի շրջանակներում աջակցություն է ցուցաբերվել ՀՀ առողջապահության նախարարությանը՝ բուժսարքավորումների եւ այլ բժշկական պարագաների տեսքով, ԿԳՄՍ նախարարության միջոցով ՀՀ դպրոցների եւ «Էօրնեկեան հանրակրթական դպրոցի» սաներին տրամադրվել են գրասալիկներ (պլանշետ)։

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը հաշվետու տարում շարունակել է նաեւ ամենամյա բարեգործական ծրագրերը։

2020 թ. նույնպես Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի եւ ՀԲՀՄ հովանավորության ներքո գործող բարեգործական հինգ ճաշարաններում մինչեւ տարեվերջ յուրաքանչյուր ամիս շահառուներին տրամադրվել են պարենային սննդի եւ առողջաբանական պարագաների փաթեթներ։

Մայր Աթոռի մանկախնամ գործունեությունը ծավալվել է «Քյուրքչյան» եւ «Նագաշյան մանուկների տուն» կենտրոններում։

Ֆինանսական աջակցություն է տրամադրվել հայաստանյան թեմերի հոգեւորականներին՝ երեք ամսվա կտրվածքով։

«Իզմիրլյան» բժշկական կենտրոնում իրականացվել է «Հայաստանաբնակ կարիքավոր սիրիահայերի բժշկական աջակցության» ծրագիրը։

ՄԱՅՐ ԱԹՈՌԻ ՎԱՆՔԵՐ ԵՒ ԵԿԵՂԵՑԻՆԵՐ

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի անմիջական ենթակայության ներքո են գործում Մայր Աթոռի Ս. Վարդան եւ Ս. Հովհաննես մատուռ-մկրտարանը, Սուրբ Հրեշտակապետաց եկեղեցին, Երեւանի Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր եկեղեցին, Ս. Հռիփսիմե, Ս. Գայանե, Խոր Վիրապ, Ս. Գեղարդի եւ Սեւանա վանքերը։ Հիշյալ եկեղեցական կառույցներում 2020 թ. կատարվել են 2765 մկրտություն եւ 1108 պսակադրություն։

ԹԵՄԱԿԱՆ ԿՅԱՆՔ

Հաշվետու տարում գործող 35 թեմին եւ 3 հայրապետական պատվիրակությանն ավելացել է Բալթյան երկրների հայոց թեմը, որն ստեղծվել է Ամենայն Հայոց Կաթողիկոսի հայրապետական կոնդակով։ Թեմերում եւ եկեղեցական կառույցներում գործում են 555 եկեղեցի ու վանք, 574 ծուխ եւ ծխական առաքելություն, 242 կիրակնօրյա դպրոց, նաեւ տիկնանց 130 եւ 142 երիտասարդաց միություններ։ Անցած տարում կատարվել են 19794 մկրտության եւ 7320 պսակադրության արարողություններ։

Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու թեմերում տարեցտարի ընդլայնվում են սոցիալական ծրագրերի շրջանակները՝ թեմերում գործող հիմնադրամների միջոցներով սոցիալական աջակցություն հատկացնելով անապահով ընտանիքներին, հաշմանդամներին,

ծնողազուրկ երեխաներին, ծերախնամ կառույցներին, բանտարկյալներին եւ զինծառայողներին։

Հաշվետու տարում թեմերում ու եկեղեցական կառույցներում շարունակվել են իրականացվել հոգեւոր-քարոզչական, սոցիալական, կրթամշակութային բազմաբնույթ ծրագրեր։ Հոգեւոր սպասավորներն այցելել են մանկախնամ եւ ծերախնամ կենտրոններ, դպրոցներ, հիվանդանոցներ, քրեակատարողական հիմնարկներ, իսկ քարոզչադաստիարակչական կենտրոնները կազմակերպել են Ս. Գրքի սերտողություններ, դասախոսություններ, գիտաժողովներ, եկեղեցասիրաց երիտասարդաց միությունների հավաքներ, երգչախմբեր, դպրոցական եւ համալսարանական միջոցառումներ ու հոգեւոր թեմայով մրցույթներ, հրատարակվել են գրքեր ու քարոզթերթիկներ։ Հեռուստառադիոալիքներով հեռարձակվել են հոգեւոր բովանդակությամբ հաղորդաշարեր, թեմերում լույս են տեսել պաշտոնական թերթեր։

Արձագանքելով Նորին Սրբության կոչին՝ թեմերի եւ թեմական կառույցների կողմից հանգանակություններ են արվել եւ կորոնավիրուսի համավարակի տնտեսական հետեւանքների մեղմանն ուղղված Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի ծրագրին նպաստելու, եւ Արցախյան պատերազմի ժամանակ հայտարարված համահայկական դրամահավաքին, որին Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու կողմից Համահայկական հիմնադրամին են փոխանցվել մեծագումար դրամական միջոցներ։ Պատերազմի ավարտից հետո եւս «Աջակցենք Արցախին» ծրագրի շրջանակներում կազմակերպվել է դրամահավաք, որի մինչ օրս հավաքված միջոցներով սոցիալական տարատեսակ աջակցություն է տրամադրվում պատերազմից տուժած հայորդիներին։ Հանգանակությունը շարունակվում է։ Ռազմական գործողությունների ընթացքում պաշտպանության բանակին են փոխանցվել վրաններ, քնապարկեր, դիտարկման եւ նշանառության սարքեր, տաք ներքնահագուստ եւ անհրաժեշտ այլ պարագաներ։

Արցախյան պատերազմի հետեւանքով մեծ կորուստներ է կրել Արցախի թեմը։ Թշնամու վերահսկողության տակ է մնացել ավելի քան 125 հոգեւոր-մշակութային կոթող, որոնցից 22-ը կարեւորագույն վանքեր եւ եկեղեցիներ են։ Հայրապետական տնօրինությամբ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում հիմնվել է Արցախի հոգեւոր-մշակութային հարցերով գրասենյակ եւ համանուն խորհուրդ, որը կոչված է զբաղվելու տեղի հայկական ժառանգության պահպանման եւ պաշտպանության խնդիրներով։

Սոցիալական ոլորտում համագործակցությունը շարունակվել է պետական կառույցների, բարեգործական հիմնադրամների եւ հասարակական կազմակերպությունների հետ։

*Հաշվետու տարում շարունակվել են նաեւ եկեղեցաշինական աշխատանքները։ Հայ Եկեղեցու թեմերում նախորդ տարում օծվել են Հողմիկի Ս. Աստվածածին եկեղեցին (*Շիրակի թեմ*), հիմնանորոգվել եւ օծվել է Աշտարակի Սուրբ Մարիանե եկեղեցին (Արագածոտնի թեմ)։* Վերաբացվել են *Բուրաստանի Ս. Հակոբ, Դիմիտրովի Ս. Աստվածածին, Գետազատի Ս. Աստվածածին եւ Ս. Սարգիս, Նոր Կյուրինի Ս. Նահատակաց եկեղեցիները (*Մասյացոտնի թեմ*)։*

*Կառուցվել կամ վերակառուցվել են, սակայն դեռեւս չեն օծվել Լեռնանցք համայնքի Սուրբ Մինաս (*Գուգարաց թեմ*), Ներքին Գետաշենի՝ Կոթավանքի Ս. Աստվածածին (ԺԲ. դար) եւ Սեւան քաղաքի գերեզմանատան եկեղեցիները եւ Գագարինի Ս. Խաչ մատուռը (*Գեղարքունիքի թեմ*)։*

*Կառուցման կամ վերանորոգության փուլում են Ակնալճի, Երվանդաշատի եւ Արմավիրի (*Արմավիրի թեմ*), Բյուրեղավանի Սբ. Աստվածածին եւ Սոլակի Սբ. Մայրավանք (*Կոտայքի թեմ*), Գեղամավանի եւ Մադինայի (*Գեղարքունիքի թեմ*), Լորի Սուրբ Գեւորգ (*Սյունյաց թեմ*), Զելյաբինսկ քաղաքի (*Ռուսաստանի եւ Նոր Նախիջեւանի հայոց թեմ*), Մասաչուսեթս նահանգի Հայ Փոյնթի եւ Թեքսաս նահանգի Սբ. Սարգիս (*ԱՄՆ հայոց արեւելյան թեմ*), Արեւմտյան Եւրոպայի հայրապետական պատվիրակության Իսպանիայի, Բոտոշանի Ս. Աստվածածին եկեղեցիները (*Ռումինիայի հայոց թեմ*)։*